## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ ԱՐԱՐԱՏԱՅ.

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ Ուսուցչուհի Օր. Ն. Արաւեանցը մեզ գրում է. «Մարտի 3) ին Թեմական վերատեսուչ Արժանապատիւ Խորէն Ծայրագոյն վարդապետ Ստեփանէն թողեց Աստրախանն ու հեռացաւ շրջագայելու իւր վիճակում. Թէ որքան օգուտ բերեց Հայր Խորէնի Աստրախան գալը, ես չեմ կարող յիշել միառմի տեղի սղութեան պատճառով. միայն այսչափը կասեմ, որ մեր քաղքայում և յատուկ կանոններից զուրկ դպրոցները սկսեցին կեանք և հոգի առնել նորա օրով. Շատ մեծ հարուած կլինի մեր դպրոցների համար, եթէ այլ ևս չվերադառնայ Հայր վերատեսուչը Աստրախան. որովհետև տեղիս օդը, ինչպէս և ինքը ասում է, սաստիկ վատ ազդեցութիւն ունեցաւ նորա առողջութեան վերայ. Ամբողջ վերջին երեք ամիսը ծանր հիւանդութիւն քաշեց և երբէք չդադարեց աշխատելուց և գործելուց.

Աստրախանցւոց սրտի բաղձանքը կատարուած կլինի և մեր դպրոցները բոլորովին ապահովուած կհամարվին բարոյապէս ու մտաւորապէս, եթէ Գեր. Հայր Վերատեսուչը կը վերադառնայ Աստրախան և չի հաստատիլ իւր բնակութիւնը մի այլ տեղ.

Խորը զգածուած լինելով ջերմաջերմ երախտապարտութեամբ առ Գեր. Հ. Վերատեսուչը, նոյն իսկ նորա հեռանալու օրը, երբ եկել էր Օր. դպրոց «բարեւ մնաս» ասելու աշակերտուհիներուն, ես իմ կողմից մատուցի այս յետադայ ուղերձը, որուն խոնարհաբար խնդրում եմ, որ բարեհաճէք տեղ շնորհելու «Արարատ» պատուական ամսագրում *).

## ԾԽԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑ ՁԻԹԻՀԱՆՔՈՎ ԳԻՒՂՈՒՄ.

Սոյն դպրոցի գոյութեան մասին իմ ժողոված համառօտ տեղեկութիւնը իւր համառօտ հաշուեցուցակով, որ արտագրել եմ ելեմուտից տումարից, ուղարկելով Խմբագրութեանդ՝ խնդրեմ հրատարակել ի գիտութիւն մերազնէից. բայց նախ քան այս աւելորդ չեմ համարում երկու խօսք նուիրել մեր գիւղական ուսուցիչներին.

Ընթերցող հասարակութեան միշտ փափագելի է իմանալ թէ արդեօք կրթական գործը ի՞նչպէս է ընթանում զանազան գաւառների հեռաւոր անկիւններում և թէ ի՞նչ վիճակի մէջ են գտնվում գիւղական դպրոցները, բայց չունինք այսպիսի մի վիճակագրական հրատարակութիւն՝ որ յագեցնէր հասարակութեան սոյն հետաքրքրութիւնը, թե-

(*) Յարգելի օրիորդը թող ների, որ չկարողացանք տպագրել իւր ուղերձը տեղի պակասութեան եւ նիւթոց առատութեան պատճառաւ. Ն. Խ.

մական տեսչութեանն և անմատչելի լինելով մանրամասն հետազօտութիւնները, այն պարտականութիւնը մասամբ մնումէ գիւղական ուսուցիչների վերայ, որոնք սակաւ աշխատութեամբ կարող են ծանօթացնել հասարակութեան այն դպրոցների վիճակը, որոնցում իրանք են պարապում. որով կ՚իմանար մամուլը թէ գիւղական ժողովուրդը ի՞նչպէս է վերաբերվում դէպի ուսումը, և ուսման ասպարէզի մէջ հմուտ գործողները նկատելով այն անհամար թերութիւնները որոնք գիւղական անփորձութեան հետևանք են, չէին խնայիլ իրանց բարոյական օժանդակութիւնը.

Մեր Շիրակ գաւառում կան դպրոցներ և գիւղական ուսուցիչներ՝ որոնցից մինը եթէ ասպարէզ է դուրս գալիս, այն էլ մի ազգօգուտ հաստատութիւն կամ մի գործող անձնաւորութիւն վիրաւորելու դիտաւորութեամբ, ինչպէս վարուեցաւ մի գիւղական ուսուցիչ, (Պ. Շիրակացին) Մեղուի 9 №ում նկարագրելով իւր կեղծ ուխտագնացութիւնը ի Հառիճ. որ պատահել էր այստեղ իւր ասածից բոլորովին տարբեր նըպատակաւ և զարդարելով իւր յօդուածը զանազան անհարազատ տեղեկութիւններով, աշխատումէ արատաւորել մի այնպիսի սուրբ հաստատութիւնը որ լուսաւորութեան աղբիւր է հանդիսացած Շիրակացւոց համար 1854 թւից սկսած. Ի՞նչն էր ստիպում պ. յօդուածագրին թաքցնել ճշմարտութիւնը և դիմել բանսարկութեան. Խընդրումենք Հառիճեան ընկերութիւնից նշանակութիւն չտալ այս տեսակ վայր ի վերոյ գրուածներին. Լաւ կանէին մեր գիւղական ուսուցիչները, որ խոհեմութեամբ Երևան հանէին գիւղական դպրոցների դրութիւնը, որով կարելի էր խրախուսել ժողովուրդը այս ամենապատուական գործի մէջ.

Ձիթհանքով գիւղը գտնվումէ Ալէքսանդրապօլ գաւառի հարաւային սահմանագլխում Արագածի արևմտեան ստորոտում և թէ հեռաւորութեան թէ ճանապարհի անյաջողութեան պատճառաւ դժուարանումէ օգուտ քաղել քաղաքի հետ յարաբերութիւն ունենալուց. Այստեղի Դպրոցը շինուած է 1868 թւին տեղական Առաջնորդի յորդորանօք և եկեղեցւոյ ծախքով, ուր հաւաքուելով գիւղական մանկտիք՝ ազատվումեն փողոցային զեղծումներից, բայց ափսո՜ս, որ գիւղացւոց անմիաբանութեան և գործի մէջ փորձառութիւն չունենալու շնորհիւ՝ երկու տարի միայն շարունակվումէ «տիրացուական» ուղղութեամբ և անխնամ մընալով դառնումէ անվարձ կրպակ Ալէքսանդրապօլցի մի վաճառականի և մի արհեստաւորի համար, որոնք թէ կեղեքումեն ժողովուրդը խաբուսիկ միջոցներով և թէ ընտելացնումեն նրանց հարբեցութեան ախտի մէջ նրանց սրտերը գրաւելու համար յաճախ պատուասիրելով *).

*) Ունինք մինչեւ այժմ երանուեմէին այն օրերը, երբ քէֆեր են արել ուսումնարանի մէջ.

Այս աղետալի դրութեամբ դպրոցը երերվում է մինչև 1878 թիւը, երբ տեղացի մի դպիր (Գրիգոր Յովհաննիսեան) Ալէքսանդրապօլի և Հառիճոյ հոգևոր դպրոցներում ուսում առնելով ձեռնադրվում է քահանայ, վերջինս նկատելով որ դպրոցը փոխանակ ժողովրդին կրթութիւն մատակարարելու՝ սարսափելի վատ հետևանքներ է թողնում հասարակութեան մէջ, Ալէքսանդրապօլցիներն արտաքսում է դպրոցից և հաղիւ կարողանում է ստանալ յօգուտ դպրոցի վաճառականից յէ---ն ք--քլի, արհեստաւորից քսան րուբլի, սրայ վերայ աւելացնելով և իր հանգանակած նուէրները՝ շինում է դպրոցի տախտակամածը և կահկարասիքը, ու սկսում է դասախօսել գրեթէ ձրիապէս.

Բայց տեսնելով· որ մի ձեռը ծափ չի տալ, ընտրում է իր հետ և ժողովրդից չորս անձինք հոգաբարձու, որոնք հաստատվումեն Հայրապետական կոնդակաւ և սկսումեն հոգալ դպրոցի վիճակը ապահովելու.

Կրթութիւնը շարունակվում է բաւական կանոնաւոր կերպով և 1881 թւականի սկզբում դպրոցը ունենում է յիսուն րուբլի (50) դրամագլուխ, մինչև ներկայ թւականը շարունակվում է նոյն ընթացքով և դրամագլուխը հասնում է հարիւր ութսուն երկու րուբլի և յիսուն հինգ կոպէկի, բացի այս և ունի այժմ դպրոցը քսան կտոր ցորեն երկու սոմար գարի. Այստեղ գրում եմ 1881 և 1882 թւերի հաշուեցուցակը.

Մուտք 1881 ամ.

| | Ր. | Կ. |
|---|---|---|
| Յիսուն րուբլի դրամագլխի տոկոսեաց փոխարէն արած ցանքից | | |
| Արդիւնք գոյացաւ | 35 | |
| Պսակներից գոյացաւ | 11 | |
| Մկրտութիւններից գոյացաւ | 3 | 3 |
| Նուիրատու անձինքներից | 25 | 50 |
| Աշակերտաց թոշակագրամ ստացվեցաւ | 139 | |
| Յիսուն կտոր գրքերի վաճառելուց օգուտ գոյացաւ | 5 | |
| Գումարն է | 218 | 70 |
| Ընդհանուր գումարը | 268 | 70 |

Ելք 1881 ամ.

| | Ր. | Կ. |
|---|---|---|
| Ուսուցչի վարձ վճարեցաւ | 150 | |
| Երկու չքաւոր աշակերտաց թոշակ վճարեցաւ | 8 | |
| Մի ժեստեայ վառարան գնուեցաւ | 4 | |
| Մի լամբայ գնուեցաւ | 2 | |
| Կաւիճ գնեցաւ | | 80 |
| Վառելանափթ | 5 | 40 |
| Գումարն է | 170 | 20 |

Տախքը մուտքից հանելով մնումէ առ 1ն Յունվարի 1882 ամի ինըսուն ութն րուբլի յիսուն կոպէկ.

Մուտք 1882 ամի.

| | Ր. | Կ. |
|---|---|---|
| Փոխանցումն է | 98 | 50 |
| Սոյն դրամագլխի տոկոսնաց փոխարէն արած ցանքերի արդիւնք գոյացաւ . . . . . . | 70 | 30 |
| Թոշակադրամներից գոյացաւ . . . . . | 231 | |
| Պսակներից գոյացաւ . . . . . . | 7 | |
| Մկրտութիւններից գոյացաւ . . . . . | 2 | 20 |
| Դպրոցի դրամով արած մի առուտուրից օգուտ գոյացաւ . | 35 | |
| Նուէրներ ստացուեցաւ . . . . . | 5 | |
| Դասական պիտոյքներ վաճառելուց օգուտ գոյացաւ . . | 10 | 15 |
| Գումար . | 460 | 15 |

Ընդհանուր գումարն է չորս հարիւր վաթսուն րուբլի տասն և հինգ կոպէկ.

Ծախք 1882 ամի.

| | Ր. | Կ. |
|---|---|---|
| Երկու ուսուցչի վարձ վճարեցաւ . . . . . | 250 | |
| Մի չքաւոր աշակերտի թոշակ վճարեցաւ . . . | 6 | |
| Վառելանաֆթ գնեցաւ . . . . . . | 6 | |
| Ուսուցչաց թէյ և շաքար գնեցաւ . . . . | 11 | 50 |
| Կաւիճ գնեցաւ . . . . . . . . | | 90 |
| Նստարանների նորոգելու ծախս եղաւ . . . . | 3 | |
| Գումարն է | 277 | 40 |

Տախքը մուտքից հանելով մնումէ առ 1ն Յունվարի 1883 ամի հարիւր ութսուն երկու րուբլի եօթանասուն հինգ կոպէկ.

Հոգաբարձուք:
- Գէորգ Աւագեան
- Գալուստ Կոստանդինեան
- Ասկար Գինոսեան
- Բարսեղ Թումանեան
- Գրիգոր քահանայ Յովհաննիսեան

Ուս. Սրապիոն Բոյպուրտեանց